

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**08 դեկտեմբերի 2018թ.
ք. Երևան**

N 165-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 07.12.2018Թ. ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՄԱՆ
ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 7.12.2018թ. դիմումով ներկայացված հաղորդումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 7.12.2018թ. դիմումով ներկայացվել է հաղորդում, ըստ որի.

«04.12.2018թ. ժամը 11.30-14.00-ին «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդ Ռուզաննա Գևորգյանը դիտարկել է «Իմ քայլը» դաշինքի թեկնածու Գևորգ Պապոյանի՝ Շենգավիթ վարչական շրջանում իրականացվող քարոզարշավը և արձանագրել, որ Չարբախ թաղամասում, մետրոյին հարակից տարածքում Պապոյանի քարոզարշավին մասնակցել է նաև թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ («Ելք» խմբակցության կողմից նշանակված) Վահան Վրեժի Արսենյանը: Ավելին՝ Վահան Արսենյանն ինքը խոստովանել է դիտորդին, որ հանձնաժողովի անդամ է և գիտի, որ իրավունք չունի իրականացնել քարոզչություն:»):

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ՀՀ ընտրական օրենսգիրք) 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ և վերը նշված հաղորդմամբ ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ հանգել է հետևյալին.

1. ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

«1. Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝ (. . .)

4) ընտրական հանձնաժողովների անդամներին.»::

Նշված իրավանորմը հստակ սահմանում է ընտրական հանձնաժողովների անդամների համար նախընտրական քարոզչություն իրականացնելու սահմանափակումը:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության 7.12.2018թ. դիմումով, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է 8.12.2018թ, ներկայացված է, որ թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ («Ելք» խմբակցության կողմից նշանակված) Վահան Վրեժի Արսենյանը «Իմ քայլը» դաշինքի թեկնածու Գևորգ Պապոյանի՝ Շենգավիթ վարչական շրջանում իրականացվող նախընտրական քարոզչության միջոցառումներին: Որպես ապացույց ներկայացվել է էլեկտրոնային կրիչ, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն պարունակում է լուսանկարներ՝ կատարված «Իմ քայլը» դաշինքի թեկնածու Գևորգ Պապոյանի կողմից իրականացվող նախընտրական քարոզչության ժամանակ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի կայացման ժամանակի, օրվա և վայրի մասին պատշաճ ծանուցվել են թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանը և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ովքեր ներկայացել են նիստին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված էլեկտրոնային կրիչի վրա առկա նկարներում քարոզչություն իրականացնողը թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանն է: Նշված հանգամանքը ապացուցվում է վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով և պարզված հանգամանքներով:

Ի պատասխան թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանին ուղղված հարցին՝ արդյո՞ք իրազեկված եք ընտրական հանձնաժողովի անդամի կողմից նախընտրական քարոզչություն իրականացնելու ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված սահմանափակումներին, Վ. Արսենյանը պատասխանեց, որ մասամբ է իրազեկված եղել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40⁸-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քարոզչության իրականացման համար

օրենքով սահմանված ժամանակահատվածում նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձանց կողմից նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն կատարելը և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանը խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով ամրագրված կանոնը և կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40⁸-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավախախտումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40⁸-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արձանագրել թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40⁸-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման կատարման փաստը:

2. Սույն որոշումը անհապաղ ներկայացնել թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողով՝ թիվ 8/9 ընտրական հանձնաժողովի անդամ Վահան Վրեժի Արսենյանի՝ հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը քննարկելու համար:

3. Սույն որոշմամբ կազմված արձանագրության հիման վրա հայցադիմումով դիմել վարչական դատարան՝ Վահան Վրեժի Արսենյանին վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

Տ.Մուկուչյան